

ԻՍԱՍՏԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Յուրաքանչյուր կենդանի լեզու բարդ, շարունակ փոփոխվող մի համակարգ է: Լեզվի այս շարունակական փոփոխելիության արդյունքում այն անընդհատ զարգանում է ու կատարելագործվում: Լեզվի՝ որպես համակարգի նման հարափոփոխ հատկության արտահայտություններից մեկն էլ նոր միավորներով նրա բառային կազմի համալրումն է, որը տեղի է ունենում նոր բառերի՝ նորաբանությունների հաշվին: Հայ լեզվաբանության մեջ բառագիտության ընկնող միավորված շատ աշխատություններ կան¹, որոնցում, ընդհանուր առմամբ, նորաբանություններ են դիտվում լեզվական այն միավորները /բառեր, դարձվածքներ, արտահայտություններ/, որոնք փոխառվում կամ ստեղծվում են լեզվի զարգացման տվյալ փուլում կենսունակ բառակազմական եղանակներով կամ էլ բառերի իմաստների փոփոխության ու զարգացման ճանապարհով՝ նոր առարկաներ, երևույթներ, հասկացություններ արտահայտելու համար, և որոնց նորաստեղծ լինելը գիտակցվում է խոսողի կողմից:

Լեզվաբանության մեջ տարբերակվում են բառային նորաբանություններ և իմաստային նորաբանություններ հասկացությունները²: Բառային նորաբանությունները և ձևով, և իմաստով նորակազմ բառեր են, որոնք առաջին անգամ են գործածվում լեզվում, ինչպես *հարցատեսակ, առանձնագրույց, բեմաշխարհ, ծնպածողով, առևտրասրահ, գերկարևորում, բազմակարծություն*, իսկ իմաստային նորաբանությունները լեզվում գոյություն ունեցող բառերի ձեռք բերած նոր, թարմ իմաստներն են, ինչպես՝ *մկնիկ, կրիչ, շտեմարան, ալբոմ, գործարար*: Սրանցով դրսևորվում են լեզվի կատարելագործման ու մշակման, բառային կազմի նորացման, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում տեղի ունեցող բազմաբնույթ փոփոխությունները: Բառերի իմաստային փոփոխությունները հիմնականում տեղի են ունենում բառագործածության գործընթացում և գերազանցապես փոխաբերական ու փոխանվանական գործածությունների, դրանց զանազան դրսևորումների հետևանք են³:

Իմաստային տեղաշարժերը հատուկ են բոլոր լեզուներին և դրանց զար-

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, Ա. Սարգսյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, Ա. Սուրվաչյան, Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955, Ս. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ, Եր., 1955:

² Տես Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 485:

³ Տես է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 359:

գացման բոլոր փուլերին: Իմաստային փոփոխությունները բազմատեսակ են, քանի որ բազմազան են դրանք առաջ բերող պատճառները, ուստի «հմարավոր չէ սահմանել ինչ-որ ընդհանրական օրենքներ, որոնք ընդգրկեն բոլոր լեզուների, բոլոր բառերի, բոլոր ժամանակների իմաստային փոփոխությունները»⁴:

Իմաստային նորաբանությունների հիմքում ընկած է իմաստափոխությունը լայն առումով, որը, իր տարբեր դրսևորումներով հանդերձ /ընդլայնում, նեղացում, շրջում և այլն/, պայմանավորված է երկու հիմնական գործոններով՝ ա/ երբ տվյալ լեզվի ներքին զարգացումներն են բերում իմաստափոխության և բ/ երբ օտար լեզվական միավորի իմաստի ազդեցությամբ բառը ստանում է իմաստային զարգացում, այսինքն՝ կատարվում է իմաստի պատճենում:

«Լեզվական ազդեցությունների ամենասովորական և շոշափելի հետևանքը բառերի փոխառությունն է, բառապատճենումը և իմաստային պատճենումը, որ ազդվող լեզվի բառերի այս կամ այն իմաստն ստանալն է՝ ազդող լեզվի բառերի օրինակով»⁵:

Քննվող նորաբանությունները կներկայացնենք ըստ իմաստափոխական հիմունքի պատճառի և իմաստային զարգացման արդյունքի:

Պետք է նկատել, որ լեզվական միավորների իմաստափոխական գործընթացում առավել գերիշխող է օտար գործոնը, հատկապես՝ վերջին տասնամյակներում: Սիա մի քանի նորաբանություններ, որոնք առավելապես փոխաբերական անցմամբ իմաստային պատճենումներ են՝ բառիմաստի նեղացմամբ:

Կերպար - նշանակել է «1. արվեստագետի ստեղծած հերոսն իր ուրույն, ընդհանրացնող նկարագրով, հոգեկան ու մտավոր բնութագրով, 2. կերպարանք, պատկեր»⁶. այսօր նաև համարժեք է դարձել իմիջ փոխառյալ բառին /անգլ. image/ - «հեղինակություն, վարկ, հասարակական կարծիք ճանաչված մարդու քաղաքական գործչի, դերասանի մասին», սրանից էլ *կերպարար* նորակազմությունը /անգլ. imagemaker/ ...նա այս անգամ հանրությանը ներկայացավ բոլորովին նոր ձևով. վերջապես փոխել էր իր մշտական *կերպարը* /Եթեր, 14.02.07/, բոլորն էլ մտածում են *իմիջի* պահպանման մասին /ն. տ./:

Կառույց - այսօր նշանակում է «հաստատություն, գերատեսչություն, համակարգ» ...պետական *կառույցները* ոչ միշտ են տեղյակ փողոցում կատարվածին /Առավոտ, 20.06.07/: Այն գործածվում է նաև պատճենյալ նորակազմ բառակապակցությամբ, ինչպես ուժային կառույց⁷ «силовая структура, եվրոպական

⁴ Տես նույն տեղում, էջ 382:

⁵ Տես նույն տեղում, էջ 371:

⁶ Բառերի բացատրությունները ներկայացնում ենք ըստ Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի:

⁷ Կայուն բառակապակցության մեջ *ուժային*-ը նույնպես իմաստի պատճենում է՝ «ռազմական, ոստիկանական համակարգ» նշանակությամբ, ինչպես՝ ուժային նախարար, (-ություն)<силовое министерство>:

կառույց ...եվրոպական *կառույցների* հետ աշխատանքը դրական ազդեցություն կունենա /Ազգ, 25.03.07/:

Նշածող /ռուս. планка/ - «որևէ զարգացման, առաջընթացի առավելագույն կարևորություն ունեցող էտապ», այսօր գործածվում է «չափանիշների սահման» իմաստով ...մարդկային արժեքները շատ են փոխվել, բարոյականության նշածողն անհնարին չափով իջեցրել ենք /Գրական թերթ, 21.11.07/:

Ջրասուզակ - նշանակել է «հատուկ անջրանցիկ հանդերձանքով ջրի տակ աշխատող մարդ»: Ռուսերենից բառացի թարգմանությամբ այսօր գործածվում է նաև որպես հագուստի տեսակի անվանում՝ «վիզը պինդ գրկող» սվիտեր /ռուս. водолазка/ ...նորածնության վարպետները այս ձմռան համար առաջարկում են բազմապիսի *ջրասուզակներ* /Եթեր, 14.02.08/։ /Սա, իհարկե, անհաջող կիրառություն է/:

Կան այնպիսի նորաբանություններ, որոնց իմաստափոխությունը նկատելի է միայն կայուն բառակապակցությունների մեջ, այսինքն՝ բառը նոր իմաստ է ստանում միայն որոշակի բառային միջավայրում, ինչպես՝

Փաթեթ /սկիչ փաթեթ, ծրագրի փաթեթ, բանակցությունների փաթեթ/ այսօր նշանակում է «փոխկապակցված դրույթների, հարցերի և այլնի խումբ» ...այսօր «Արմենտել» ընկերության *սկիչ փաթեթը* պատկանում է հունական կողմին /Իրավունք, 10.04.07/ . երբեմն գործածվում է նաև բառակապակցությունից դուրս՝ փոխանվանաբար, ինչպես՝ ...առաջարկված *փաթեթի* շուրջ լուրջ քննարկումներ դեռ չեն եղել /Յեռ./:

Բարձր /բարձր տեխնոլոգիաներ, ~նորածնություն, ~մշակույթ/ - նոր իմաստն է «գերժամանակակից, շատ առաջադիմական» ...մենք ապրում ենք *բարձր տեխնոլոգիաների* դարում /Եթեր, 02.03.07/, Փարիզում *բարձր նորածնության* շաբաթը մեկնարկել է /Եթեր, 09.03.07/:

Ընթերցում /առաջին ընթերցում, խորհրդարանական ընթերցում/ - նոր իմաստով «քննարկում» ... օրինագծի շուրջ լուրջ քննարկումներ եղան երկրորդ *ընթերցման* ժամանակ /Ազգ, 08.09.07/։ Սրան համարժեք իմաստով այսօր գործածական է նաև նույնպես փոխառյալ լսում /ռուս. слушание/ ձևը /խորհրդարանական լսումներ/:

Կառուցողական /-ություն/ < ռուս. конструктив ~ный, /կառուցողական առաջարկ, ~ծրագիր, ~երկխոսություն, ~հայեցակարգ/ - «ընդհանրապես հասարակական, քաղաքական, տնտեսական և այլ ասպարեզներում արդիական առաջադեմ գաղափար, ծրագիր» ...ամեն հարցի նկատմամբ էլ պետք է *կառուցողական* մոտեցում դրսևորել /Յեռ./:

Ստվերային /-ություն/, /ստվերային տնտեսություն, ~եկամուտ, ~գործունեություն/ - ռուս. теневая экономика, այսօր նշանակում է «պետական հարկերից խուսաճավող տնտեսական նաև այլ բնույթի քողարկված գործունեություն»

...բոլոր *ստվերային* ընկերությունները աստիճանաբար կդադարան հարկատու /Բեռ/:

Չամբյուղ /սպառողական զամբյուղ/ <ռուս. потребительская корзина - նշանակում է «սպառողի կենսական անհրաժեշտության ապրանքների նվազագույն ամբողջությունը» ...շատ խղճուկ վիճակ է ներկայացնում շարքային աշխատողի *զամբյուղը* /Առավոտ, 18.11.06/:

Երկխոսություն /քաղաքական երկխոսություն, մշակութային- / - նոր իմաստով «քննարկում, շփում, նաև բանակցություն» ...Հայաստան-Ադրբեջան *երկխոսությունը* եական փոփոխություններ չի խոստանում /Ազգ, 16.09.07/, ...վիճելի հարցերը պետք է լուծել *քաղաքական երկխոսությունների* միջոցով /Ազգ, 23.09.07/:

Այր - նախկինում նշանակել է «տղամարդ», «քաջ». այսօր, բացի այդ իմաստներից, *պետական այր, քաղաքական այր* կայուն բառակապակցություններում գործածվում է «պաշտոնյա» իմաստով:

Թափանցիկ /ընտրություններ/ - նոր իմաստով նշանակում է «արդար, ազնիվ, չկեղծված» ...*թափանցիկ* ընտրություններ անցկացնելու վերաբերյալ խոստումները դժվար են իրականանում /Բեռ/:

Իմաստափոխության ենթակա են ոչ միայն հայերեն, այլև փոխառյալ օտար բառերը հատկապես օտար լեզվամտածողության, մասնավորապես ռուսերենի և անգլերենի ազդեցությամբ: Այս բառերը, լինելով գիտության, տեխնիկայի տարբեր ճյուղերի, հասարակական-քաղաքական տարբեր ոլորտների տերմիններ, իմաստի պատճենմամբ փոխաբերության ճանապարհով իմաստափոխվել են հաճախ ընդլայնելով իրենց իմաստը՝ դադարել են միայն տերմին լինելուց, ինչպես

Վիրուս /բժշկ./ - «մանրէ», նոր իմաստով «համակարգչային քայքայող ծրագիր» ...ամերիկյան անվտանգության մարմինները փորձում են գտնել ԶԴԲ-ի համակարգիչները քայքայող *վիրուսի* հեղինակներին /Ազգ, 23.10.07/: Այդպես էլ *հակավիրուս* /«քայքայող ծրագիրը չեզոքացնող ծրագիր»/ և *վիրուսակիր* /«քայքայող ծրագիր պարունակող համակարգիչ, պնակիտ, խոսակալառակ» բժշկական տերմինները ...համակարգիչներ պետք է ներմուծել *հակավիրուս* ծրագրեր, որոնք միանգամից կհայտնաբերեն *վիրուսակիր* ինֆորմացիան /Բեռ/:

Դոմոր /բժշկ. «արյունատու»/ դոմոր երկրներ - նոր իմաստով «մատակարար» ...Ռուսաստանը մեզ համար անփոխարինելի է որպես *դոմոր* երկիր /Առավոտ, 14.08.07/:

Ալբոմ /երժշտ./ նշանակել է «նկարների, գծագրերի և այլնի ժողովածու», նոր իմաստով «երաժշտական ստեղծագործությունների ժողովածու ծայնասկավառակի, լագերային սկավառակի տեսքով» ...երգչի հերթական *ալբոմը* գերեց հանդիսատեսին և պլատինե կարգավիճակ ստացավ /Եթեր, 19.03.07/:

Օպերատոր – նոր իմաստով գործածվում է /բջջային³/ հաճախորդների և ունի երկակի նշանակություն 1. «/բջջային/ կապ ապահովող կազմակերպություն, ընկերություն», 2. «կապն ապահովող, աշխատանքներին հետևող մեկ աշխատող» ... Հայաստան է մտել բջջային կապի երկրորդ **օպերատորը** /ԵՊՀ 28.02.06/, ... ձեր հարցերին կպատասխանի մեր **օպերատորը** /ԵՊՀ/

Կլան /ռուս. клан/անգլ. clan/ «1. դրամի տեսակ /թուրք./, 2. տոհմային համայնք կելտերի և այլ ժողովուրդների մոտ», նոր իմաստով «քաղաքական, նյութական և այլ շահերով կապված մարդկանց խումբ» ... ամեն ինչ որոշում է փողատեր-իշխանավորների **կլանը** /Զեռ./: Համարժեք իմաստով խոսանքական լեզվում գործածական է նաև ֆայֆա /արաբական / փոխառյալ ծնդ:

Փոխառյալ ձևերում հանդիպում են նաև արևմտահայերենից անցած բառեր, որոնք ենթարկվել են լիակատար կամ մասնակի իմաստափոխության, րենց **խոսնակ** – նախնական իմաստը՝ «ռադիոյի հաղորդավար», այսօր այն գործածվում է «Ազգային ժողովի նախագահ» իմաստով /անգլ. speaker, նաև «մամուլի խոսնակ»/ քարտուղար իմաստով ... նորընտիր **խոսնակը** առաջաբեկ հարցը տեղափոխել այլ հարթություն /Զեռ./, լրագրողների հետ հանդիպեց նախագահի **մամուլի խոսնակը** /Զեռ./:

Փոխանցել /-ում/ – փոխաբերական նշանակությամբ «հայտնել, տեղեկացնել լուր տալ» ... ինչպես **փոխանցեց** ԱԺ պատգամավոր Վ. Հովհաննիսյանը, /Իրավունք, 10.06.07/:

Պետք է նկատել, որ սրանք ոչ բոլորն են հաջող կիրառություններ կառելի է խուսափել ասենք **մեսիք**, **կլան** օտար բառերից. **փոխանցել**-ը ևս հաջող չէ հայր իմաստը շատ լավ արտահայտվում է **հայտնել** բայով/:

Նշված օրինակներում իմաստափոխությունը պայմանավորված է հիմնականում արտաքին գործոններով, այսինքն՝ փոխառվել է իմաստը: Սակայն իմաստափոխության կարող են հանգեցնել նաև ներլեզվական գործընթացները, որոնցով էլ հիմնականում կատարվում է բառապաշարի հարստացումը: Երբեմն որպես նոր երևույթի /առարկայի, հասկացության/ անվանում հանդես են գալիս լեզվում արդեն եղող լեզվական միավորները, որոնք ընդլայնում կամ նեղացնում են իրենց իմաստների շրջանակը, այսինքն՝ ենթարկվում են մասնակի կամ լիակատար իմաստափոխության: Դրանց մեջ կարող են լինել բառեր, որոնք արդեն հնացել են և իրենց հիմնական իմաստով այսօր գրեթե գործածական չեն /այս դեպքում ինչ-որ առումով տեղի է ունենում բառի տերմինացում՝ բառիմաստի նեղացմամբ/, կամ այնպիսի բառեր, որոնք դեռևս պահպանում են իրենց նախկին իմաստները /այս դեպքում տեղի է ունենում մասնակի իմաստափոխություն՝ բառիմաստի ընդլայնմամբ/:

³ Այստեղ բջջային բառը ևս իմաստային նորարարություն է. «փոքր» իմաստով որպես հեռախոսի տեսակի անվանում:

1. Բառիմաստի ընդլայնում, «այսինքն՝ իմաստի այնպիսի փոփոխությունն ու զարգացումը, որի հետևանքով որևէ առարկայի /երևույթի, գործողության և այլնի» հասկացությունն արտահայտող բառն իր բովանդակության մեջ է առնում նորանոր առարկաներ /հատկանիշներ, գործողություններ և այլն/, որով և ընդարձակվում է հասկացության ծավալը, կամ նոր իմաստներ են առաջանում»⁹։ Պետք է նկատել, որ բառի ձեռք բերած նոր իմաստը կարող է և տերմինային արժեք ունենալ, որով և բառը տերմինային գործածություն է ստանում, ինչպես

Պատուհան - իր հիմնական «օդ և լույս ստանալու համար պատի մեջ բացված անցք, լուսամուտ», և բազմաթիվ փոխաբերական իմաստներից բացի այսօր գործածվում է նաև «որևէ խնդրի, հարցի ևն ամբողջական լուծման մեկ ուղղություն պետական-վարչարարական մեկ օղակում» նշանակությամբ ...որոշվեց, որ գազի հետ կապված բոլոր պրոբլեմները պետք է լուծվեն մեկ պատուհանի սկզբունքով /Յեռ./:

Շեմ - ունեցել է «շեմք» իմաստը, փոխանունության միջոցով այսօր ձեռք է բերել նաև «չափանիշների սահման» իմաստը, ...դիմորդներից և ոչ մեկը չկարողացավ հաղթահարել պահանջների նվազագույնը *շեմը* /ԵՊՀ, 12.10.07/:

Շտեմարան - ...ուղիղ իմաստներին զուգահեռ գործածական փոխաբերական իմաստն է «որևէ բանի մեծ պաշար, հարստություն ունեցող բնագավառ», ինչպես ...ժամանակակից երգարվեստը պետք է օգտվի մեր ժողովրդական երգերի շտեմարանից /Յեռ./: Այսօր այս բառը փոխանունության միջոցով կայունացել է «առաջադրանքների, խնդիրների ժողովածու, հավաքածու» իմաստով, ինչպես *հարցաշարերի* շտեմարան:

խոսափող - ունեցել է «1. հեռախոսափող, 2. ծայնային ալիքները որոշակի ուղղությամբ կենտրոնացնելու կոնաձև խողովակ, 3. լսափող, 4. փխբ. մեկի կարծիքները կրկնող, տարածող մարդ, ծայնափող»։ այսօր համարժեք է օտար *միկրոֆոն* բառին, ինչպես ...առաջին *խոսափողին* թող մոտենա Ա. Սարգսյանը... /Յեռ./:

Լցում - նշանակել է «մեջը լցնում /աղացած մսի ու զանազան համեմունքների խառնուրդ/ լցնելը, լցոնել»։ այսօր ձեռք է բերել նոր իմաստ «ընտրությունների ժամանակ քվեաթերթիկների ամօրինական լցնելը քվեատուփի մեջ», ինչպես ...վստահված անձը պնդում էր, որ եղել են *լցոնումների* դեպքեր /Յեռ./:

Առաքելություն - նշանակել է «1. համծնարարություն, առաջադրանք, 2. վսեմ գործ, միսիա, 3. /կրոն./ առաքյալ լինելը, նրա գործունեությունը»։ այսօր գործածվում է «որևէ խնդրի լուծմամբ զբաղվող մասնագիտացած մարմին, հաստատություն» իմաստով ...հանդիպել է փախստականների հիմնախնդիր-

⁹ Տես է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 377:

ներով զբաղվող միջազգային կազմակերպությունների և առաքելությունների ներկայացուցիչների հետ /Զեռ./:

Պիմակ - այսօր գործածվում է դիմահարդարման մեջ՝ «մաշկի խնամքի համար պատրաստված հատուկ քսուք» նշանակությամբ ...տան պայմաններում կարելի է սնուցող *դիմակներ* դնել /Եթեր, 31.01.08/:

Սառեցնել /սառեցնել բանկային հաշիվները, ~ավանդները, ~գործընթացը/ - նոր իմաստով «կասեցնել, ժամանակավորապես դադարեցնել» ...տնտեսական ճգնաժամի պատճառով կարող են *սառեցվել* որոշ հաշիվներ /Զեռ./:

Ոսկե՝ «ոսկուց պատրաստված, ոսկյա» - այսօր գործածվում է նաև յուրահատուկ իմաստով՝ որպես «որևէ համարանիշի միանման կամ կրկնվող, հեշտ հիշվող թվեր» /*ոսկե* հեռախոսահամար, *ոսկե* համարանիշ/ ...ճանապարհային ուստիկանությունը կազմակերպել է «*ոսկե*» պետհամարանիշների աճուրդ /Առավոտ, 22.03.08/։ /Այս բառի իմաստային համաբանությամբ այսօր գործածվում է նաև արծաթե բառը՝ «պակաս լավ» իմաստով, ասենք ոչ թե մույն, այլ իրար հաջորդող թվերով համարանիշ/:

Բառմաստի ընդլայնմամբ իմաստային փոփոխություններ են կրել նաև մի շարք տերմիններ և տերմինային արժեք ունեցող բառեր, որոնք գործածության ոլորտների ընդլայնմամբ մուտք են գործել կիրառության նոր ոլորտ՝ ստանալով տերմինաբանական նոր գործառություն, կամ էլ վերածվել են համագործածական բառի չդադարելով գործել նաև որպես տերմին, ինչպես՝

Թափարգել - «շոգեքարշի վագոնի, ավտոմոբիլի ևն հատուկ սարք՝ հարվածի, ցնցման ուժը թուլացնելու համար», իմաստի ընդլայնմամբ այսօր նշանակում է առհասարակ «խոչընդոտ, արգելակ՝ վտանգը չեզոքացնելու նպատակով» ...այդ քայլը կապահովի այդ կառույցի իբրև ահաբեկչության դեմ զխափող *թափարգելի* որոշիչ դերը /Ազգ, 20.11.06/։ Կիրառվում է նաև որպես համակարգչային տերմին՝ բուֆեր /անգլ. buffer/՝ «ինֆորմացիայի պահեստ» փոխառյալ բառին համարժեք իմաստով:

Պոկում /մարզ./ - «1. պոկելը, 2. ժանրամարտի վարժություններից մեկը»։ փոխաբերական գործածությամբ այսօր ստացել է «թափ, առաջընթաց, սկիզբ» նշանակությունը ...վերջապես մի կարևոր որոշում ընդունվեց, և դա ցույց է տալիս, որ բանակցություններում *պոկում* կա /Ազգ, 21.03.06/:

Լծակավոր - եղել է «լծակ /մետաղյա ամուր ծող, միզ/ ունեցող», նոր իմաստով՝ «փխբ. գործելու, ներգործելու, ազդելու միջոց ունեցող» ...այդ խմբերից յուրաքանչյուրը ինչ-որ *լծակավոր* միջոց ունի և կարող է ամեն հարց լուծել /Զեռ./:

Տանիք - «շինության ծածկ, առհասարակ որևէ կարգի շինվածքի ծածկույթ», ուսերեն քրուա բառի պատճենմամբ նոր իմաստով՝ «հովանավորություն, ապահովություն, թիկունք իշխանական կառույցներում» ...պատասխանատվությունից չի վախենում, որովհետև *տանիք* ունի, փող ունի, շրջապատ ունի...

/Դեռ./: Նույն իմաստով էլ այս բառը հանդիպում է «տանիք ունենալ, տանիք գտնել» դարձվածային արտահայտություններում:

2. Բառիմաստի նեղացում, այսինքն՝ «բառի իմաստային ծավալի նեղացում բառի ավելի լայն իմաստի կամ իմաստների մասնավորման շնորհիվ»¹⁰: Այս դեպքում իմաստափոխված բառերը, երբեմն պահպանելով նաև իրենց նախկին իմաստները, մասնավորված գործածությամբ հանդես են գալիս նաև որպես որևէ բնագավառի տերմին կամ տերմինային արժեք ունեցող բառ, ինչպես՝

Ծածկույթ - եղել է «առհասարակ որևէ բան ծածկելու կտոր, ծածկոց». այսօր տնտեսագիտության մեջ գործածվում է «որևէ հարկի կամ տուրքի դրամական արժեքի փոխարեն այլ ապրանքով կամ հումքով վճարելը» իմաստով ...հնարավոր է պետական պարտքը ապրանքային *ծածկույթով* փակել /Դեռ./: Նոր իմաստ է ձեռք բերել նաև **ռադիոծածկույթ** բառում:

Անձկացում - հիմնական «նեղվածություն» իմաստը մասնավորվել է բժշկական տերմինահամակարգում՝ ձեռք բերելով «*զարկերակների պատերի նեղացում*» իմաստը:

Կայք - պահպանելով նախկին՝ «ունեցվածք, ինչք» իմաստը՝ այսօր ձեռք է բերել տերմինային արժեք համակարգչային սայթ /անգլ. sight/ փոխառյալ բառի իմաստով: /Այս իմաստով գործածվում է նաև կայքէջ նորակազմությունը/ ...համացանցից օգտվողները վաղվաֆից կարող են ծանոթանալ Սիրուշոյի անհատական *կայքին* /Դեռ./, ...համացանցը հարստացել է նոր հետաքրքիր *կայքերով* /Եթեր, 07.02.08/:

Ընդդիմություն «1. ընդդեմ, հակառակ լինելը, հակառակություն, ներհակություն, 2. դիմադրություն». այս իմաստների մասնավորմամբ այսօր ձեռք է բերել նոր կիրառություն «իշխանություններին հակառակվող ուժ՝ կուսակցություն/ներ/» ...այդ հարցի շուրջ քննարկումներ եղան նաև *ընդդիմության* ներսում /Ազգ, 16.10.07/:

3. Մի խումբ բառեր իմաստային նորաբանություններ են դարձել վերաիմաստավորման շնորհիվ, այսինքն՝ «տեղի է ունեցել բառի հին իմաստի կորուստ «մահացում», նոր իմաստի ձեռք բերում, այլ կերպ ասած՝ բառի նախկին իմաստի փոխարինումը նոր ուղղակի իմաստով»¹¹: Ինչպես՝

Գործարար - եղել է «գործանող, գործարքարար» իմաստով՝ որպես անհանձնարարելի բառ. այսօր գործածվում է որպես հոմանիշ բիզնեսմեն փոխառյալ բառին:

Ատենախոս /-ություն/ - եղել է «հեռտոր» հնացած իմաստով. այսօր գործածվում է որպես համարժեք փոխառյալ դիսերտանտ /դիսերտացիա/ բառերին:

¹⁰ Տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, էջ 139:

¹¹ Տե՛ս Ե. Աղայան, նշվ. աշխ., էջ 380:

Վարկանիշ - նախկին իբրև ֆինանսական տերմին «տարբեր տեսակի ժամանակավոր թղթադրամների ամբողջություն, դրամանիշ» իմաստը այսօր մթագնել է, և նոր «հեղինակություն, վարկ» իմաստը աստիճանաբար կայունանում է որպես համարժեք փոխառյալ ռեյտինգ /անգլ. rating/ բառին:

Համակիր - նշանակել է «1. համակրանք արտահայտող, 2. համակրող»։ այսօր գործածվում է «գաղափարակից, կուսակից» իմաստով ...չի պաշտպանելու որևէ թեկնածուի և չեզոք է լինելու՝ միաժամանակ իր *համակիրների* միջոցով փորձելով ընտրական տեղամասում հանգստություն պահպանել /Առավոտ, 23.11.07/:

Կրիչ - կորցրել է իր նախկին՝ «կրող» իմաստը և գործածվում է որպես համարժեք օտար դիսկ /անգլ. floppy/ բառին:

Թվարկված բառաշարքի մեջ չենք ուզում մտցնել այն բառերը, որոնք կիրառական աշխուժացում են ստացել իմաստի թարմացմամբ, որովհետև, եթե վերը թվարկված բառերը նոր իմաստով հանդես են գալիս՝ նախկին իմաստ/ները լրիվ կամ մասնակիորեն կորցրած, ապա վերջիններս՝ այդ իմաստները նորովի վերագտած: Այս կարգի բառերը պատմական, քաղաքական, տնտեսական և այլ հանգամանքների բերումով դուրս են մղվել լեզվի գործուն բառապաշարից համալրելով բառապաշարի հնացած և հնացող բառաշերտը, իսկ այսօր մույն հանգամանքների բերումով դարձել են գործուն բառաշերտի մաս, ինչպես՝ *ավագանի, նախարար, քաղաքապետ, համայնք, վեհաժողով, գրասենյակ* / նոր իմաստով՝ «կոորդինացիոն կենտրոն/, *ատենապետ*:

Բառերի բազմաթիվ նոր իմաստներ էլ առաջ են եկել նմանական զուգորդությամբ, երբ «առարկաների, երևույթների, հատկանիշների և այլնի միջև եղած որևէ կարգի նմանությունը առաջ է բերում տվյալ հասկացության անվանման գործածություն՝ որևէ կողմով դրա նմանությունն ունեցող առարկայի համար»¹²: Նմանական զուգորդումները հիմնված են բառերի փոխաբերական գործածությունների վրա և պայմանավորված են ինչպես առարկաների, երևույթների արտաքին նմանությամբ, այնպես էլ ներքին հատկությունների ու գործառնությունների, նաև մտքով՝ երևակայությամբ ստեղծվող ինչ-որ հատկանիշի, կողմի նմանությամբ, ինչպես՝

Մկնիկ - արտաքին նմանության հիման վրա այսպես է կոչվում համակարգչի մասերից մեկը:

Բազմածալ - «շատ ծալքեր ունեցող», փխր. իմաստով՝ «շատ ճկուն, բանիմաց» /«Համազգային նշանակության հրատապ հարցազրույց էր բանիմաց, բազմածալ մի ղեկավարի հետ»/¹³: Քաղաքական ոլորտում գործածվում է «բազմակողմանի քաղաքական ուղղվածություն ունեցող» նշանակությամբ և

¹² Տե՛ս է. Աղայան, նշվ. աշխ., էջ 360:

¹³ Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2003:

հանդես է գալիս կայուն բառակապակցության կազմում «բազմաձայլ քաղաքականություն»:

Երբեմն բառերի կրած իմաստային փոփոխությունները պայմանավորված են առանձին անհատների, սոցիալական տարբեր խմբերի՝ այս կամ այն երևույթի, հասկացության, իրողության նկատմամբ ցուցաբերած սուբյեկտիվ գնահատականով, վերաբերմունքով: Այս առումով ժողովրդագիտական բառաշերտի որոշ բառեր, արծագանքելով կյանքի նոր իրողություններին, զանազան իմաստային փոփոխությունների են ենթարկվել՝ հիմնական կամ փոխաբերական իմաստները զուգակցելով իմաստի սուբյեկտիվ՝ զգացական, դատողամտածական երանգավորմամբ, ինչպես՝

Պլստալ - «սահել»։ Նոր իմաստը՝ «փխբ. դժվարությամբ, մի կերպ դուրս պրծնել, փրկվել /որևէ փորձանքից, դժվարությունից/» ...այս անգամ նրանց չի հաջողվել «պլստալ» մաքսատան աշխատողների ուշադրությունից /Բեռ.:/

Լդոգում - «ծեփում, ապականում»։ Նոր փոխաբերական իմաստով՝ «որևէ խնդիր անորոշ, ոչ հստակ դարձնելը, այն շրջանցելը» ...իսկ կառավարությունը ամեն ինչ անում է, որ կարողանա ապահովել պատասխանատվության «լդոգումը» /Բեռ.:/

Կարուսել - նոր փոխաբերական գործածությամբ՝ «ընտրակեղծիքի տեսակ» ...ընտրապայքարում եղել է ծեծկռտուք, քվեարկությունների կարուսել, ...եվրոպական դիտորդներն այս անգամ փաստեցին, որ կիրառվում է քվեաթերթիկների կարուսել կոչվող ընտրակեղծիքի հնարքը /Բեռ.:/

Կերատաշտ // կերակրատաշտ - նոր իմաստով արտահայտում է բացասական վերաբերմունք «պետական կառավարման լծակներից դեկլար անձանց չաղած նյութական օգուտները» ...իրենց ներկայացված պահանջները չկատարելու դեպքում նրանք կգրկվեն իրենց կերատաշտից /Առավոտ. 14.10.05/, ...իշխանության կերակրատաշտի մոտ հավաքված մարդիկ /Բեռ.:/

Ակնհայտ է, որ նորաբանությունների սուբյեկտիվ իմաստները հիմնականում բացասական-ծաղրական վերաբերմունքով են պայմանավորված:

Պետք է նկատել, որ որոշ բառեր իմաստային տեղաշարժեր են ապրել ստանալով ընդգծված ժարգոնային երանգ, այսինքն՝ սրանց նոր իմաստները հատուկ են լեզվի այդ շերտին և հասկացվում են դրա շրջանակներում, ինչպես

Թույն - բազմաթիվ ուղիղ և փոխաբերական իմաստների հետ զուգահեռ իբրև իմաստային նորաբանություն այսօր գործածվում է նաև «խիստ հետաքրքիր, շատ լավ, ինքնատիպ, ցնցող որևէ բան, երևույթ» իմաստով /թույն ֆիլմ, ավտոմեքենա, հագուստ, անձ և այլն/, ...«Թույն կասետ-2» տեսաերիզը արդեն վաճառքում է /Բեռ.:/

Դգել - «ուղղել, հարթել»։ այսօր ունի նաև նոր իմաստ «դուր գալ, բավականություն պատճառել, հաճելի լինել, շատ ձեռնտու, հարմար, օգտակար, նպատակային լինել» /Ա՛յ դգեց,- պատասխանեց նրանցից մեկը /Ազգ.

12.06.06//. այստեղից էլ դժող «դուրեկան, հաճելի» /ու «դժող» խմիչքի ազդեցությամբ շարունակում են... /Ն.տ./: Այս բառը խոսակցական-ժարգոնային բառաշերտում գործածվում է նաև «1. զանազան ճանապարհներով հարստանալ, փող կուտակել» իմաստով ...այդ աշխատանքում մի լավ «կղզեն» իրենց /Յեռ./:

Ռուսերենի խոսակցական-ժարգոնային բառերի իմաստային պատճենմամբ կազմվել է հետևյալ նորաբանությունը.

Գցել /ռուս. кинуть/ - փոխաբերական գործածությամբ ձեռք է բերել «վնասել, խաբել, նյութական վնաս հասցնել» իմաստը, որից էլ կազմվել է նույն բառաշերտին պատկանող գցում նորակազմությունը, որ նշանակում է «խաբելով փող շորթել, սնանկացնել» ...կանգ չեն առնում ոչ մի բանի առաջ, ընկերը ընկերոջն է «գցում», հարևանը հարևանին /Յեռ./:

Բառիմաստի փոփոխությունները առաջին հերթին նկատվում են խոսակցական լեզվում. հատկապես երիտասարդության բառապաշարում բառերը հաճախ գործածվում են յուրօրինակ իմաստներով, որոնցից որոշները հետագա հաճախակի կիրառության արդյունքում տարածվում են և կայունանում: Այսօր շատ բառեր նոր իմաստով գործածվում են բանավոր-խոսակցական լեզվում դարձյալ ժարգոնային երանգավորմամբ, ինչպես՝

Քաշել - գործածվում է համակարգչից կամ հեռախոսից որևէ ինֆորմացիա /հատկապես երգ, երաժշտություն/ «դուրս հանելու, փոխանցելու, տեղափոխելու տեսակ» իմաստով ...համացանցից օգտվողները կարող են առանձին-առանձին քաշել ավրոսի երգերը /Եթեր, 29.11.07/:

Պահել - ըստ է. Աղայանի ԱՅԲԲ-ի՝ այս բառն ունի 45 իմաստ, որոնցից ոչ մեկը չի համապատասխանում այն իմաստին, որով այսօր այս բառը ակտիվ գործածվում է մեր ամենօրյա բանավոր խոսքում. հասարակական փոխադրամիջոցներում ամեն վայրկյան ասում են «այստեղ պահեք, իջնենք». պահել նշանակում է «արգելակել, մեքենան կանգնեցնել»:

Տակ տալ - է. Աղայանի մոտ հանդիպում ենք տակ տալ, վերս առնել «ծանրութե՛ս անել» նշանակությամբ: Այսօր տակ տալ հարադիր բայը գործածվում է նոր ըմաստով՝ «տուժել, վնասվել /ֆինանսային առումով/, սնանկանալ» ...Եթե շարունակենք այս պայմաններում աշխատել, իսկապես տակ կտանք /Յեռ./:

Ժիծակ - այսօր այս բառը, հատկապես երիտասարդության շրջանում, գործածվում է յուրահատուկ իմաստով. նշանակում է «սուր քիթ ունեցող կոշիկ» ...շուկան հեղեղված է «ծիծակ» կոշիկներով /Յեռ./: Այս բառը հանդիպում է նաև այլ կիրառությամբ որպես լավ, թանկարժեք համարանիշ /տես «ոսկե համարանիշ»/ ...ցուցադրվում են, թե ինչպես են թանկարժեք կամ ծիծակ համարներով ավտոմեքենաները խախտում երթևեկության կանոնները /4-րդ իշխանություն, 2004/:

Կնքահայր - նոր իմաստով՝ «որևէ գործի ղեկավար, հեղինակ, հովանավոր» ... հետադիմական այս պրոցեսի կնքահայրը բանակի ղեկավարությունն է /Իրավունք, 15.08.2004/:

Ուշագրավ են մի շարք գունամուկներ, որոնք ռուսերենի իմաստային պատճենմամբ խոսքիմասային անցմամբ իմաստափոխվել են՝ համալրելով բառապաշարի տարբեր գործառական շերտերը, ինչպես՝ կանաչ որակական ածականը գունային նմանությամբ պայմանավորված՝ փոխաբերական «դուլար» նշանակությամբ ստացել է գոյականական իմաստ:

Երկնագույն /ռուս. голубой/ ածականը գործածվում է «համասեռամուկ» իմաստով: Այս նույն իմաստով հանդիպում ենք նաև գունավոր ածականի կիրառությանը ... նա կարծես թե այն գունավորներից է /Յեռ./:

Թեև խոսակցական-ժարգոնային երանգավորում ունեցող այս բառերը տարածված են բանավոր լեզվում, բայց գործածվում են նաև գեղարվեստական գրականության և հրապարակախոսության մեջ, որտեղ, որպես հեղինակի սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորում, ստանում են ոճական կարևոր արժեք խոսքին տալով արտահայտչականություն և համապատասխան միջավայրի շուկն:

Այսպիսով ներկայացված իմաստային նորարարությունները դրսևորում են հետևյալ առանձնահատկությունները.

1. Հասարակության բաղաբական, տնտեսական, սոցիալական կյանքի վերափոխումներով, գիտության, մշակույթի և այլնի զարգացմամբ պայմանավորված ի հայտ են գալիս իմաստափոխական նոր իրողություններ մեր լեզվի բառային կազմի տարբեր շերտերում /գրական, խոսակցական, ժարգոնային և այլն/:
2. Իմաստափոխությունը պայմանավորված է ա/ ներլեզվական գործընթացներով և բ/ օտար լեզվական միավորների ազդեցությամբ:
3. Իմաստափոխությունն ընթանում է գերազանցապես փոխաբերության ճանապարհով:
4. Մի շարք բառերի իմաստային փոփոխությունները նկատելի են միայն նոր բառագործածություններում, դարձվածքներում և կայուն բառակապակցություններում:
5. Նոր իմաստային գործածության արդյունքում բառերը տեքմինային արժեք են ստանում:
6. Իմաստային /նաև կառուցվածքային/ պատճենման գործընթացում ռուսերենը որպես ազդող լեզու, աստիճանաբար գիշում է իր տեղը անգլերենին:
7. Ինչպես լեզվի զարգացման մախորդ փուլերում, արդի հայերենում ևս իմաստափոխությունը հետաքրքիր պատկեր է ներկայացնում ինչպես իմաստային փոփոխությունների տեսակների, այնպես էլ այդ փոփոխությունները պայմանավորող պատճառների ու հիմունքների տեսանկյունից: